

Բ Ի Ի Ր Ա Կ Ն

Ն Ր Ա Վ Ի Ր

Ազգագրական, Բանասիրական, Լեզուաբանական և Գրական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԷՆ ԳՐԱԳՐԱԳԻՐ



ԲԱԾԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գաւառներ ու Պոլսա Տարեկան 50 Գրուշ
, Ղևնամանայ 30
Օտար Լրկիլներ [6 Բուլղի] 15 Ծրակ

Հ Ա Ս Յ Է
درسمانده بجهت قوستده قاضعسكر خاندان
پورانغ ، غرضی ادارده
ՏՆՕՐԼՆՈՒԹՅՈՒՆ ԲԻԻՐԱԿՆԻ
Գաղափար Խան, Պահե՛լ գարու, և Պոլսու

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Սուրբ մը որ ամէն գաւառացի հայու սրտին մէջ տեղ մը , ու ամէն քաղաքի՝ գրեթէ ամէն զիւղի մէկ անկիւնը ուխտաւայր մը ունի՝ փլած կամ կած գուն, հին կամ նոր, վանք կամ մատուռ : Դիւրամասաչելի է ան , եւ խնդրակատար : Իրեն նուիրուած խունկին ու մտին , աղօթքին ու ծոմին փոխարէն , զինքը սիրողներուն կ'այցելէ երազի մէջ՝ ճերմակ ձիով մը ու ճերմակ մազերով , ձեռքը նիւզակ մը , որով կը պաշտպանէ իրենները՝ երեւելի եւ աներեւոյթ փորձանքներու զէմ : Իրեն անունով չինուած գրեթէ ամէն մենաստանի մէջը կամ գործը կը դանուի քար մը , աղստամ մը , որ կը կրէ իր ձիուն սմբակին զրոյմը , աղացոյց սուրբին անկէ անցրին , ծաւալելու պաշտամով հոն՝ իր հաւատքին հաւասար , զորովն զորով , ու կորովն՝ կորով : Դրան որ եւ անգիր սաւանդութիւնները գանի կը ներկայացընեն որչափ եռանդուն իր լոյս-

հաւատքին , նոյնչափ կտրին ու ճարտարամտ իր աշխարհային գործերուն մէջ : Ո՛չ մէկ երկիւղ , ո՛չ մէկ բռնութիւն , ո՛չ մէկ արդելք , բնական ու մարդկային ո՛չ մէկ դժուարութիւն՝ իր մանկանացուի կեանքին մէջ՝ վայրկեան մ'իսկ չեն կրցած կասեցընել զինքը իր վեհ նպատակէն , ու հիմայ ալ , թէեւ անմահութեան փառքին մէջ , միշտ կ'այցելէ , միշտ կը պաշտպանէ զանոնք , որ իրեն կը դիմեն , կը կատարէ խնդրուած քններ , եւ արազ կը հասնի հոն , ուր վտակոծ սրտեր իր օգնութիւնք կը պաղատեն լաւաղին : Անշուշտ անոր համար է , որ մեր երանաչնոր՝ Նախիթ անբաշտատ արազողը տուած են անոր՝ իրենց անմահ երգերուն մէջ : Գաւառացի կոյս-աղջիկը , որ այնչափ դիւրաւ ու շուտ կը փոխէ իր զգեստին ձեւն ու նիւթը , բնաւ չի խախտի Ս . Սարգսի վրայ ունեցած խանդավառ հաւատքին : Իր ամէն աղօթքներուն ու ուխտերուն մէջ , սիրական սուրբին անունը կը յեղյեղէ միշտ , անոր պաշտպանութեան կապտիկի , ու նոր կը հասնի Առաջաւորաց շարքապալանքը , հինգ օրեր զիւերացորեկ ծոմ կը պահէ՛՛ երազին մէջ զայն

տեաննկու եռանդուն յուսով : Շատ տեղեր դեռ կը շարունակուի այս կրօնական սովորոյթը : Մայրեր՝ իրենց մատուցալ աղջիկներու կեանքը անսուաղութենէ չվտանգուելու հոգածութեամբ՝ շատ դժուարաւ կը համոզեն զանոնք միջին օրը՝ չորեքշաբթի իրիկուն գէթ պատառ մը հաց ծամել : Մայրենի գորովն ու հաւատքի երկիւղածութիւնը ժամերով պշտաբ կը մղեն դժ մ առ դժ մ, ու յաղթանակը կը վճռուի վերջապէս ի նպատ գրկեալ ստամոքսին : Ուրբաթ իրիկունը, երբ եկեղեցին կատարած է արդէն սուրբին նախատնակը , ամէն ծոմապահի զխոսն վերել , բարձիկին քով դրուած է աման մ'ախլուր ու դաւաթ մը ջուր : Սյղ այն զիշերն է , ուր ծերունի սուրբը պիտի այցելէ իրեններուն , եւ ձիուն ոտքին հետքը զըրոջմէ ախլուրն վրայ : Շաբաթ առտունց արշալուսին , որչափ իրարանցում տան մէջ , եւ որչափ յուսասաբութիւններ . . . « Մայր , քեզի չըսի որ ծոմա աւել մի տար , Ս . Սարգիս պատան կը սրդողի , տես իմ քով չեկուս » կը հեծե՛ք աղջիկներէն մէկը , ուրիշ մը անդին վէճի բռնուած է իր փոքրիկ քրոջը հետ , կասկածելով թէ չարածնին կանխած , ախլուրը խոտնած է՝ նուիրական նշանը անհետացնելու նախանձով : Բայց վերջապէս , կայ անդին մէկն ալ , որու սիրտը լեցուած է հպարտութեամբ ու ցնծութիւնով , վասնզի յաջողած է իր հոգեկան սրբութեան փորձը չահիլ , և ցոյց տալ դամբիկի (տեղական բարբառով՝ քուռիկ) փոքրիկ սմբակին հետքը զըրոջուած իր ախլուրն վրայ : Սուրբին այցելութիւնով , թէ . . . մարդկային հընարքով : Ամէն պարագայի մէջ սակոյն այդ զիշերուան կուսական երազներն անվերջ են ու շատ բեղուն (1) , Ուղեղն ու զգայնութիւնն ամբողջ շաբաթ մը զրգոտած , լարուած միեւնոյն տեսլակա-

նին յիշատակով , վերջապէս երեւակալեալ հաճոյքը կ'ընծայեն ենթակային սրտին ու հոգոյն : Դրացուհիներ առտուն կանուխ բան գործ թողած՝ կը հաւաքուին քովէ քով , և անուշ անուշ մտիկ կ'ընեն երազներու երկար շարքին : Հին-քաղաքին կամ Նին Արարկիրի մէջ Ս . Սարգիսի անունով կայ աւերակ եկեղեցի մը , եւ գրեթէ կէս ժամ անդին դէպ արեւմտեան հիւսիս՝ « Դօզլուխ » գետին եզերքը մենաստան մը նոյնպէս աւերակ : Դեռ կանգուն ու հաստատուն մնացած ասոնց հիմերէն ու ծերերու աւանդութեանէն կը հասկցուի թէ 60 - 70 տարիներ առաջ , չէն ու կրօնական պաշտամանց ծառայելու վիճակին մէջ եղած են անոնք , Իգնատիոս պատրիարքի մէկ կոնդակն անցած է ձեռքերին , որու մէջ հոգելոյս եկեղեցականը « Ողջոյն , կ'ըսէ վանացն Փիլիպպոսի առաքելու եւ Սրբոյն Սարգսի եւել » : Ինչ որ կ'ապացուցանէ թէ Նին են այս մենաստաններ եւ շատ տարիներու գործ չէ անոնց անջքանալը : Ս . Սարգիս տնին օրը Արարկիրի հայ ժողովուրդը ուխտի կ'երթար գետեղերեայ այդ Նինցած մենաստանին (2) . բայց այս վերջին տարիներս ուխտաւորներու խոնկէն ու մումն զրկուած է խեղճ սրբալայրը՝ տընտեսական անձկութեանց պատճառաւ :

Թ . ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(2) Արարկիրի ու Ալինայ շրջակաները կան Ս . Սարգիս անունով սրբավայրեր , բան մը որ կ'ապացուցանէ թէ այս անդերուն զվառուոր պաշտպան սուրբը Ս . Սարգիսն է : Ասոր պատճառ նոյն ինքն յարգելի յողուածայիրը վերը բացատրած է , երբ կը գրէ թէ միշտ կը պաշտպանէ զանոնք որ իրեն կը դիմեն , կը կատարէ խնդրուածքներ » եւ այլն : Ամենէն ժողովրդական Ս . Սարգիսը Գարամաշկերտինն է ուր շրջակայ գեղերէն բազմաթիւ ուխտաւորներ կ'երթան :

(1) Հմմտ . « Բիւրակն » թիւ 0-10 « Երազներու ազդեցութիւն » հոգին ըմբռնելու :

ԽՄԲ .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՊՈՒՏՍԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐՅՅ

(Էհեևողութեամբ նորագոյն կարծիներու)

(Շար. Բիւրակն 1900 թիւ 2 էն)

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՊՈՒՏՍԱՅԻ

Որ եւ է կիրքի գերի չեղաւ անի :
Չարն ինչ է՝ չգիտցաւ : Կատարելութեան
մարմնացումն եղաւ : Իր գերմարդկային
աչքերովը անցեալն ու ներկան կան-
խատեսեց, եւ փրկութեան ճամբան գը-
տաւ : Անոր իմաստութիւնը անհուն էր :
Անոր սէրը չափել՝ անկարելին փորձել էր :
Իր անունը արդէն յարարապէս արը-
ուած էր իրեն որ կը նշանակէ «իմաս-
տուն, ամենողորմ սէր» : Պուտսայն
ճանչնալու համար որչափ սորվիմ, այն-
չափ կը հրանամ իր վրայ, կ'ըսէ Պրօֆ.
Ճօնսպէլը : Ու Բարթոլոմէոս Սէյնթ-Է-
լէն կ'ըսէ : բոլոր կործնի նիւնաղբիւրներուն
էն կառնելի դէմքն է անի :

Երեք վիճակներ վերագրուած են ա-
նոր, առաջինը բուրբուրի անդոն, անձեւ,
յաւիտենական, անփոփոխ և ամենուրեք :
Ասիկա մեր գիտցած հոգին չըլլայ : Երկ-
րորդը իր մաքուր գործերէն ու քարո-
զութիւններէն առաջ եկած արդիւնքի
մը մարմնացումն է : Մտքի բուրբուրի
անջատ վիճակ մը, որ փափաղներէ ու
ցանկութիւններէ հեռի է, ու առաջի-
նութիւնով պայծառացած : Երրորդ վի-
ճակովը ինքնաջօժար եւ պատրաստ կը
ղգայ ինքզինքը հաստատապէս լուսա-
ւորելու մարդիւրու որդիները : Ասանք ըս-
տարողելիներն են անոր անձին կամ ի-
մացական կարողութեան, ու կը յարէ
Ջիբուցիէ Աբիցու (*), մենք ալ ունինք

(* Տիարմափաղ եւ Ջիթուցիէ Ա-
շիթցու կաշուած երկու շարունցի և Սէյ-
լանցի մսն ու կարող վարդապետներն
էին որ Ջիբախօյի կրօնական համաձո-
ղովին առեն, իրենց պիտը լեզուովը

աս երեք վիճակները, ուրեմն ի՞նչ է մեր
ու Պուտսայն տարբերութիւնը, կ'ըսէ
դարձեալ ճառասօսը : Ինքնին տարբե-
րութիւն չկայ : միայն Պուտսայ ինքնա-
մշակութիւնով ալ վիճակին հասաւ,
մինչդեռ մենք մեր իմացական ուժը
կիրքերու մէջ կը փճացնենք :

Ու Մամ Միւլլիէ լեզուադէտ պրոֆէ-
սորը, Պուտսայն վրայ խօսելու առեն,
սապէս կ'ըսէ : Եւնարատ կեանքի տիպարն
էր անիկա : Ձինքը ճանչցողներուն օրի-
նակ մ'եղաւ իր անսողիւս կեանքովը :
Կատարեալ մարմնացումն էր այն բոլոր
ճշմարտութիւններուն որ ինք քարոզեց :
Անոր անձուրացութիւնը, զթարսու-
թիւնը ու անփոփոխելի քաղցրաբար-
յութիւնը բոպէ մ'իսկ զինքը իր խոր-
հուրդներուն մէջ ի գերեւ չհանցիկն :
Առաքնութեան ու խորհրդածութեան
վեց տարիներուն մէջ պարտաստեց իր
համազումներու ծրարը ու ծաւալեց զա-
նոնք խօսք և համազում միակ միջո-
ցովը գրեթէ կէս դար : Ու երբ օրով կը
փակէր սա երկրային շրջանը, իր ետեւէն
յիշատակելի ու խնկելի կեանք մը կը
թողէր համակ սրբութիւն : Վսեմ վար-
դապետութիւններ քարոզելու, ու վըշ-
տացած հողիները ամաքելու համար աչ-
խարհ եկող Պուտսան աւելի գործնա-
կան ապոցոյց մը կրնա՞ր առլ մեզի իր
վարդապետութիւններուն վեամութեանը
կամ ճշմարտութեանը քան իր անձը :
Ու զո՞ք կրնայի՞ք անոր վրայ բիծեր մը
նշմարել որ մարդերու պզգանք ազդելն :
Ս՛հ, ըսէք կ'աղաչեմ, ինչու՞ կը յար-
դենք Յիսուսին, ու կ'երկրպագենք, չէ՞
որ համակ կեանքովը սկը էր, և սա-
կայն Սաքիւս-Մունիին ի՞նչ կը պակսէր
արդէն : Մեր մէջ աւանդութենէ բեր-
ուած հուսադներ մը ունինք որոնք ա-
ւելի տանջանք են մեզի : Խնդուքս կու-
ղայ երբ այսքան տարիէ ի վեր կը փըս-
փանն ախանջիս թէ միկ մարդ մը մի-
այն փրկիչ ըլլալու սահմանուած է : Իսկ

Պուտսայականութիւնը ներկայացուցին
նոր աչխարհի թոռներուն

եթէ ինծի ներէին, պիտի ըսէի թէ աշխարհ երկու փրկիչ ունեցեր է մէկը քանի մը դարեր առաջ միւսն, երկուքն ալ զուժ ու երկուքն ալ սէր: Մէկը միւսին լրացուցիչն էր անուշտ:

Յիսուսի և Սաքիամուսիի միջեւ անջատ բաղդատութիւն մը քիչ վերջը պիտի ընեմ:



Իր քարոզածներուն էջերը բանալէ առաջ քանի մը տողերու մէջ պիտի սերէի՞ք կարծեմ, անդրադառնալ իրմէն առջի հնդկական ընկերութեան կացութեանը վրայ: Ան ատեն Հնդկաստանը կրօնական յեղափոխութիւններու թատրոն էր: Հնդիկ ընկերութիւնը երկու դասի բաժնուած էր Մրամանուս և Պրահմանուս: Ամէն զիէ վարդապետներ ելան ու խեղճ ժողովուրդը զուարի պէս իրենց ետեւը ձգեցին:

Մեծ կոխ մը կար ճամբարութիւնը վնասելու: Շատ երիտասարդներ ինքզինքնին առած՝ լեռները կը թափառէին: Ըզնաւորներ անօգուտ տանջանքներու կ'ենթարկէին ինքզինքնին: Վիճոտ երիտասարդներ սկեպտիկութիւնը մէջ կը նետէին՝ իր միակ հարուածը օրուան իրապաշտ վարդապետութիւններուն: Շատեր յոռետեսութեան դռները արի կ'առնէին ու կ'ուրանային այադայ կեանք մը. խոր ու բազմակողմանի իմացականութեան չըջան մըն էր՝ բացուած Պրահմանական չըջանակներէն մինչև ուսմիկ դասը: Ու Հնդկաստանի կրօնական աս խառնակ ընթացքին մէջ, միաստուածութիւն և փէտիչականութիւն ծիւղեր կ'արձկէին ժողովրդային սիրտ կոչուած գետնին վրայ: Երբ օրուան սկեպտիկութիւնը իր հակաճառութիւններով սկսաւ յարձակիլ բարոյական զաղափարներու դէմ, երբ ցաւի հառաչը զուրթաւ մարդերու բերանէն, ահա այդ առանէն Պուտտան աշխարհ եկաւ, կ'ըսէ Տիարմայիայա (*), որ ցուցուց նոր ու կարճ ուղի մը՝ արեւէն կարմրած այդ

վատոյժ աչքերուն համար: Աւասիկ իր խօսքերը:

Պուտտայի խօսքերէն պզտիկ էջ մը

Բացէք ձեր աչքերը, ով մարդեր, մասէն ազատելու միջոցը գտած եմ: Կը սորվեցընեմ ու կը ցուցընեմ ձեզի օրէնքը: Թէ որ զուք իմ ճամբաներուս հետևիք, քիչ վերջը արմատի պիտի ըլլաք այն փառքին որ ինծի հաւատացողներուն տրուած է: Երկու ճամբաներ կան որոնց պէտք չէ հետեւի ճամբարութիւնը փընտրուողը: Առաջինը հեշտասիրութեան ցած ու սամիկ կեանքն է, — միւսը ճղնաւորութեան և խտտակեցութեան կեանքը որ ցաւով լեցուն է, անօգուտ և անպիտան: Մէսիայէն — թախկաթայէն - գտնուած ուրիշ ճամբայ մը կայ աչքերը բացող, մտքի խաղաղութիւն տուող և բարձր իմաստութիւն մը ներշնչող: Ասիկայ արդարութեան թագաւորութեան հիմնարկութիւնն է, ու Պէնարէսի կեդրոնէն աս սէրի պատգամը զրկուեցաւ բոլոր աշխարհի, Գացէ՛ք ո՛վ Պընիքլիներ, կըսէ Պուտտայ, աս աշխարհի ամէն խտտերուն մէջ չըջելով շահեցէք մարդերը, ազատեցէք ու քաջալերեցէք զանոնք ըսելով որ օրհնեալ Պուտտայ մը եկած է որ սրբութեան օրէնքը կը քարոզէ:

Բարոյական զարգացում անկարելի է անոր որ մաքուր կեանք մը չ'անցընէր: Ըճամբարութեան արեւին ճառագայթները կը մտնեն միայն անոր մտքին մէջ որ անվախաբար բաները կը քննէ և նախապաշարուած զերծ է, հեշտոտ կիրքերով չ'օրորուիր ու տրամարանելու կարողութիւնն ունի: Նախապաշարում, վախ, կիրք և տգիտութիւն չորս թեթութիւններ են որոնցմէ ազատիլ պէտք է: Իրր մարդ ծնիլը առանձնաշնորհում է ու մարդու մը արժանիքն իսկ կը կայանայ իր տրամարանելու կարողութեան ու իսկալ կեանք մը անցընելուն մէջ: Մի պաղատիք, միմութիւնը յոյս չ'իկրար տալ: Լուծեմէն բան մի խնդրէք որովհետեւ չ'իկրար խօսիլ փուճ աստուած-

(*) Տես նախորդ ծանօթութիւնը:

ներէն բան մի՛ խնդրէք ընծաներով ու երգերով, ո՛չ ալ կաշառեցէք զանոնք արիւնի ու մտի զո՛նքով: Ձեր մէջը փրկուցութիւնը պէտք է փնտռուի Ամէն մարդ իւր բանտը կը շինէ, Վնտորայէն շատ աւելի վեր կրնաք բարձրացընել ձեր վիճակը, կամ իջեցընել զանի գեանի որդերուն աստիճանը, Բիբաւոր մարդերու վիճակը աս կամ ան է:

Ես, Պուտտան, որ լացի իմ եղբայրներու ասացունքներուն հետ և որուն սիրտը կտորած էր ամբողջ աշխարհի վշտին առջեւը, կը խնջամ որովհետեւ ձերբազատութիւն կայ: Ես ձեզի ճշմարտութիւնը կը խօսմի, Դժոխքէն ցած, երկինքէն բարձր, ամենհոռաւոր աստղերէն անդին, ու Պրահմայի բնակարաններէն շատ հեռու, անակիրքն ու անվասճան, միջոցին չափ յախտեանական ու ճշմարտութեան չափ ստոյգ զօրութիւն մը հաստատուած է որ կը շարժի զէպ ի բարին և որուն օրէնքները միայն մնայուն են: Առաջուց զօրծուած սխալները ցաւ ու վշտ կը ծնին, իսկ բարիքները օրհնութիւն:

Ինքզինքնիդ մի խաբէք: Այն կեանքը որուն մեծ զին մը կուտաք, երկայնաձիգ շղթայ մ'է տառապանքի: Միայն իր ցաւերը կը մնան ու հաճոյքները փախչող թռչուններու նման են որ ալ չեն վերադառնար: Ծնելու ցաւ, մանկութեան ցաւ, պատանակութեան ցաւ, երիտասարդութեան ցաւ ու ծերութեան օրերու ցաւ: Ասոնք բոլորն լրացուցիչներն են կեանքի: Գեղեցիկ է երկիրը, սակայն անտառաբնակները օր օրի իրար կը բզկտեն: Երկինքի չափուզան ալ աղտոր է, սակայն երբ երկրի մարդերը սոսմամա՛ս կորսուին, կաթիլ մը իսկ չեն իջեցըններ:

Հարցուցէք հիւանդին, հարցուցէք սղաւորին, ու հարցուցէք ամենուն թէ կեանքը սիրեցի՞ր... մանուկը իմաստուն էր՝ երբ ծնած ըլլալուն համար կուլար:

Տնարմայի վախովը քաղցէք, կ'ըսէ Տէր Պուտտա, ու խոյս տուէք ամէն

կարգի մեղքէ: Ձեր ընկերներուն հանդէպ բարի գտնուեցէք, ու թող մարդասեցութիւնը, ազատութիւնը եւ բարկութիւնը զայրին, կեանքը զեփեփի չափ հեզ ըրած:

Կառավարեցէք ձեր շուրթները իբր թէ ասպարանքի զուռեր ըլլային: Թո՛ղ ամէն խօսք հանդարտ, գեղեցիկ ու քաղաքավար ըլլայ: Թո՛ղ ամէն զօրծ յանցանք մը փրկէ և արժանիքի մը տո՛ւմն օգնէ: Բիբերեղալ գնտակներուն մէջէն տեսնուած արծաթ թիւերուն նշման, թող սէրն ալ բարի զործերով ցուցուի:

Ամէն մարդ իր ընկերը սիրելու է, ինչպէս մարդ մը իբր զաւակը կը սիրէ վտանգի մէջ իսկ:

Ինչպէս առաջ ըսի, Պուտտան երբէք Աստուած չ'ընդունիր ու չեմ գիտեր՝ իր այսքան պարզ մէթոքը մեր առջև և ունենալնէս վերջը՝ տխմար ըլլանք այնչափ մը՝ ըսելու աստիճան թէ Պուտտայականութիւնը միաստուածութիւն մը կամ որ եւ է կարգի աստուածութիւն մ'է: Ո՛չ, կատարեալ մարդն է արդէն կատարեալ աստուածը, կ'ըսէ: Հաստաքը հաստատուելու է զիտողութեան, քննութեան և վերլուծութեան վրայ: Սոյանութիւն ու զոդութիւն եւ ո՛ր եւ է կարգի անբարոյացնող նազք բացարձակապէս իրենց լայն նշանակութիւնով արդիւուած է: Ձէնքի ու թոյնի վաճառումը մերժեց Պուտտայ: Ու որ մը չլսեցինք որ Պուտտայականութեան խաթրին, կաթիլ մը արիւն իսկ թափուեցաւ աշխարհի որ եւ է անկիւնին մէջ: Ու երբ ես աս տողերը ակամայ մէջ կը նետմ, չեմ կրնար չյիշել կաթիլկններուն Ս. Բարթեղիմէոսի գիւժերին եւ Հաւատաքննական օրերու դիակները... կը լռեմ:

Երկու հազար եւ աւելի տարիներ առաջ, Պուտտայականութիւնը ողորդած էր աշխարհ սէրի ուժովը, ու ասոր համար է որ մէկին բերանը առաջ չ'երթար ըսելու որ անկա սխալ ուղի բռնած էր: Հոգ չէ որ մարդերու աս խառնուր-

դին մէջ ամէն կարգի հաւատքներ մը ծլած ու խամբած են, սակայն Պուտտայականը զանազանութիւն չի դնէր անոնց միջեւ, ու կը յարգէ ու կը փայփայէ անոնց ամէն մէկ նշխարները՝ կրօնական հաւատքի:

Եթէ ինծի հարցընէին որ ի՞նչ երկինքի տակ մարդկային միտքը յիսպէս զարգացուցած է իր ամէն մէկ կարողութիւնները, խորասլէս քննած է կեանքի ամենամեծ խնդիրները եւ անոնց լուծումը դտած, որ և Պրատոնի եւ Քանդի զպրօցէն ելողներուն ուշադրութիւնը գրաւած է, պիտի ըսէի թէ Հնդկաստանի մէջ, կ'ըսէ Մաքս-Մուլլեր, Ու եթէ զարձեայ, կ'ըսէ Պրօֆէսորը, հարցը նեղու ըլլայինք թէ ի՞նչ գրականութիւնէ՝ հոս Եւրոպայի մէջ՝ կրնանք քաղել այն ուղղութիւնը որուն շատ պէտք ունինք մեր ներքին կեանքն աւելի կատարեալ, աւելի տիեզերական և աւելի ճշմարիտ ընելու համար, կեանք մը՝ ոչ միայն աս աշխարհիս մէջ, հապա յա՛րտեանականին համար, կը ցուցնեմ ձեզի Հնդկաստանն, հոն դիմացէք:

Իր վարդապետութիւններուն մէկ էջէն միտսին անցնիլ ստիպուած եմ: Ընկերական, անհատական ու ամէն կարգի բարոյացնող պատուէրներ կ'երևին իր պարտատած հիւնարի քօտին մէջ, որ Մաքս-Մուլլերի բառերով և էն կատարեալն է որ երբեք աշխարհ տեսած ըլլայ: »

Դարձո՛ւր ազ ամենակատարեալ քօտին երեսները, հոս սա քանի մը ամփոփ բացատրութիւններու մէջ զուլալ ու հարազատ բարոյականի դասեր, հունա, քիչ մը անդին, հնդիկ ընկերութեան համար նոր ու խորհուած պէտքեր, ու ասոնց կից ընտանեկան յարկի յարաբերական պարտքերու շար մը: Հայրերը իրենց զաւակներուն դիտութիւն եւ սառքիութիւն սորվեցնելու են, կ'ըսէ: Պուտտայի համար կ'ինք ամէն պարագայի տակ հաւասար նկատուելու է էրկիմարդուն: Ամենազոյղն տարբերութիւն չիկայ ու ցուցունելու չէ, կ'ըսէ: Կ'ինք կըր-

նայ հասնիլ սրբութեան ամենարարձր աստիճանին որքայաց է մարդերու առջեւ: Տեսէ՛ք ի՞նչ համեստ ու արդար լեզու մը կը գործածէ Պուտտա կնիկին համար որը սակայն ներկայ քաղաքակրթութիւնը տակաւին կը զլանայ:

Ինչպէս որ մեծ զետերը, երբ ովկէանոսը կը հասնին, կը կորսնցընեն իրենց հին անունը և ծագումը ու կը կրեն այլևս մէկ անուն մը, նոյնպէս ամէն ցեղէ ու ամէն կրօնէ մարդեր պիտի կորսնցընեն իրենց հին փառքն ու զաւանանքը, և պիտի ըլլան մէկ խումբ մը, որուն վրայ ոսկիէ տառերով սէր ու եղբայրութիւն պիտի դրոյմէ Տէր Պուտտան: Հարուստները պարտաւոր են իրենց ունեցածին կէսը աղքատներուն տալ: Ու մարդուն ալ աղքատութիւնը իրաւացի պատճառ մը չէ որ կրօնէ ետ կենայ անկայ: Դրամատէրներու եւ գործաւորներու զարակերջի անլուծելի խնդիրները Չատագովող ո՛ր և է խօսքի չենք հանդիպիր, ընդհակառակը, կ'ըսէ որ հարուստ ու աղքատ նոյն աստիճանին վրայ գտնուելու են, եւ նոյն իրաւունքները վայելու են հաւասարապիս:

Արդէն մարդերը տգիտութիւնով դիւնովցած են, ի՞նչ հարկ ուրեմն որ եւ է բանով զարձեայ գիտնալ որ մեղքի պատճառ կ'ըլլայ: Ժողովուրդները աշխատելու են տիեզերական առաքինութիւն մը ձեռք բերելու: Առաքինութիւն ընելը զժուար է, ու ո՛վ որ առաքինի կ'ըլլայ, զժուարութեան կը յաղթէ: Կուսակցէ Պուտտան պատերազմները եւ ամէն կարգի արևունհեղութիւնը: Գատերազմի տեղ իրաւարարութիւն եւ խաղաղութիւն կը պատուիբէ ու նոյն սա խօսքերուն արձագանդն է կարծես որ հասու Նիքորա Բ. կայսեր ականջը:

Նիրվանայ

Մարդուն չափ հին ու աստուածնւորուն չափ մնացուն սա յա՛խտեանականին գաղափարը էն մեծ գլուխներն իսկ յոգնեցուցած ու վերջապէս զանոնք ալ իր գոյր տանելու պէս բան մը ըրած է:

Աս կեանքէն անդին վիճակ մը կայ, կ'ըսեն, ուր հողիլին համար հազարումէկ զիրքեր ստեղծել փորձեցին ամէն մեծ կրօնի հիմնադիրները ։ Ու շատ ալ ընական ենթադրութեամբ մը, քանի որ մենք մեր ամեն գործերը վաղուան յուսովը կը շաղենք ու ատով կը պարարենք ինքզինքնիս, կարծես նոյն այդ յոյսն է որ մահէն վերջը մեզի հետ կ'ընկերանայ Ստիւքսէն անդին՝ երջանիկ դաշտերու մէջ ։ Պուտտան ալ այդ կեանքէ՛ր գերազոյն հանգիստ և անէութեան վիճակ անուանեց ։ Ներվանայ՝... որուն սակայն հասնելու համար անարատ կեանք մ'անցընելու ենք ։ Մարդերու միակ նոյառակն ասոր հասնիլ ըլլալու է և կ'ըսէ, որը թէ՛ պէտեւ սոլորական մահկանացուներու ըմբռնումէն վեր է, սակայն կատարելութեան մէջ քաղովը ի վիճակի է ատի ըմբռնելու ։ Բարեչըլու մով՝ մարդ միտ կը փոխուի, կ'ըսէ, ու յախտենական փոփոխութիւնը որ մը յախտենական կեանքը կ'ըլլայ մարդուն ։ Հոն ո՛չ ծնիլ կայ ո՛չ մեռնիլ, մշտակայ հանգիստն է անի, անէութեան քունը ։ Դանդիո գերեզմանաց, Նիրվանայ ։

Ըստ Տհարմափալայի, Նիրվանայ ըստածը չորս վիճակներ ունի, որոնց առաջինը Հօմօ-հիօ-տօմօ-նեհան, Պուտտայի ըընութիւնը կը ներկայացընէ, որ սկիզբ ու վախճան չունի եւ բոլորովն ազատ է մեղքէ ։

Երկրորդը Աւօ-նեհան, ուր պիտի զգանք որ մեր վիշտերը կը թեթեւանն ու մտքերնիս բաւական ստկուած ու դատարկուած ։ սակայն մարմինը դեռ կը մնայ ։

Մայօ-նեհան, երրորդ աստիճանն է ուր մարմինը եւ միտքը կ'ոչնչանան ։ Անդեռակցութեան վիճակն է ասիկա ։

Իսկ չորրորդ աստիճանը Նիրվանայի է՛ն բարձր ու վսեմ զիրքն է, որուն կըրտանս հասնիլ մարդերը իմացական էն բարձր կարողութիւններով սօսեալ ։

Ու աս չորս վիճակներուն հասնելու համար, պուտտայականը կարգ մը խոստումներ ունի ընկելք ։ Ազատեւ մարդերը ազի-

տութենէ, հրաժարիլ անոր ս'րև է վաւաղներէն, ծաւալել Պուտտայի վարդապետութիւնները եւ վերջապէս յուսալ հասնիլ անոր բարձրագոյն զիրքին ։

Քրիստոս եւ Պուտտայ

Պատմութիւնը ինքզինքը կը կրկնէ ։ Երբ որ մը, երկուք ու կէս տասնեակ դարեր առաջ, Հնդկաստան իր նախնի օրերու հաւատքի սարսուռներէն ազատած, վերջին նոպաներուն մէջ Պուտտայի աջը համբուրեց, անկէջ վեց դար վերջը ուրիշ անապատական մը, Յիսուս կոչուած, բոլոտն ու գրեթէ արեւէն խաչած, Պաղեստինի մէկ ծայրէն մուտք կ'անցնէր՝ հաւատքի նոր ծրար մը բերած ազ մտէն աստուածներու խնկարկու վարպետորդի Հերաներուն, որոնք սակայն երեսնին ծառակա՛ն չուզեցին Եւանջելին հետ Որդին մը ճանչնալ, Բայց անհաւատ ու յամառ Հրէաստանը իր ցընորական երազներուն մէջ քանի որ կ'օրորուէր տակաւին, իր մէջէն դարձեալ հաւատացեալներու խումբ մը ներձակ ազդեցութեամբ կարծես Բանին փառքը աւետելու համար ուրե՛ր չգացին ։ Ու Քրիստոնէութիւնը այդ ատեն այլ եւս ժամանակիս պէտքը դարձած կարգ մը նկատումներով, ողորկեց արեւմտեան աշխարհը, որի անունով սակայն քաղաքակրթութիւնը ինչն'ը չձնաւ ու ինչն'ը չկորսնցուց ։ Ու Քրիստոնէութիւնն եւ Պուտտայականութիւնն, աշխարհի սա երկու ամենէն աւելի իրարու նմանող կրօնները, գրեթէ նորարդիւնքներունեցան կ'ըսէ Եղիա Տէմրճիապալեան, մեր ամենէն աւելի իմաստաւէր բանաստեղծ գրագէտը ։

Գերադասուի Տէմրճիա-Տու, կրօնական Համաժողովին մէջ խօսելու ատեն, սապէս ըսաւ ։ Աս յիշատակելի համախորհուրտին անմիջական արդիւնքն եղաւ Ամերիկեան ժողովուրդին հակումը դէպ ի Պուտտայականութիւն ։ որոնք Պուտտայի տաճարներ կանգնեցին այդ նոր աշխարհի թարմ հողին վրայ, ուրկէ միշտ բողբոջած է արդէն զիտութեան

ու ճշմարտութեան սերմերը : Եւ պարոն ձօզէֆ Քուք կը պնդէ որ 20,000 Պուտտայականներ կամ այսօր Պոսթընի մէջ, ու արեւմտեան հորիզոններուն վրայ Քրիստոնէութիւնը իր մարմնուն նշոյլները կը ցուցնէ եղեր՝ վաղը կամ միւսօր արեւելքի վրայ բողոքականացող զիսակները ողջունելու ձօզէֆ-Քուք կըսէ դարձեալ թէ Եւրոպայի արդի իմաստասէրները Յիսուսը երեւակայութեան ծնունդ կ'ենթադրեն, եւ հոն՝ Եւրոպայի մէջ, մեծ յօտարութիւն մը կը ցուցուի եղեր Պուտտայական վարդապետները բերելու Հնդկաստանէն :

Քաղաքակրթութիւնը արեւելքէն արեւմուտք անցած է. ու այդ արեւելքը տուած է վերջինին իւր Աստուածը, ու Քրիստոնէութեան կրօնը որ տասնեւինը դար քաղաքականացեալ աշխարհի միակ կոտանը ըլլալէ վերջը, այսօր նոյն ագարեւմուտքը զուտը խոնարհած՝ դարձեալ « առաւել լոյսի » մը պաղատանքը կը դնէ : Ըստ որի՝ մտքէն պիտի անցնէր որ այդ լոյսը, այդ կրօնը, այդ գիտականացած հաւատքը Պուտտայականութիւնը պիտի ըլլայ : Սակայն պիտի ըլլայ՝ վերջապէս, գէթ այնպէս կը կարծեն ոմանք . իսկ ես՝ չեմ գիտեր, պիտի ըսէի :

Տէքի-Հօրու-Շու եւ Քուք գիտակ կամ սխալ ալ եղած ըլլան իրենց կարծիքներուն մէջ, սալայի որոշ է որ նոյնութեան բաւական մեծ երեւոյթ մը կան նազովրեցիին եւ Սաքիա Մունիին միջեւ : Մին աստուածային թագաւորութիւնը ունէր իր ետեւը, միւսը հնդիկ իշխանի մը անունը : Իրենց մայրերը Մարիամ ու Մայա կը կոչուէին, ու երկուքին ալ ծնունդը նոյն պարագաներու մէջ տեղի կ'ունենայ : Անարատ յղութիւններ՝ հրեշտակներէն նախատեսուած ու աւետուած : Պուտտայի ու Յիսուսի ծնունդին ատենները՝ նոյն այն մոգերը կարծես՝ թանկագին ընծաներով երկրպագելու կուզան :

Երկուքին մէջ ալ Սիմէոն Մերունին աչքիդ առջեւ կուգայ : Հերովդէսի նման

Պիմպազաւա թագաւորը մարգահամար ընել կուտայ երկրին մէջ, Յիսուս 12 տարեկան հասակին մէջ կորսուած զբանուեցաւ, նոյնը Պուտտայի համար կը պատմուի, Անապաար տարուիլը, ծով պահելը, Սատանայէն փորձուիլը համանման զէպօքեր են երկուքին մէջ ալ : Յիսուս Յորդանանի մէջ կը մկրտուի, Պուտտայ Նախրանցնանայի մէջ : Մէկին խօսքերը Նիրվանային կը հային, միւսինը յաւիտենական կեանքի մը : Սէր, եղբայրութիւն եւ հաւատարմութիւն կը բարոզեն երկուքն ալ : Ըստ Պարոն Հուպպէ-Շլէյսն աւելօր նոյնութիւնները աչքի առջեւ ունենային վերջը, տակաւին չ'որանար Յիսուսի պատմական անձ մը ըլլալը : Միայն, կ'ըսէ որ իր կենսագրական կարգ մը մասերու վարդապետական ու բարոյազիտական էական պաշարը առնուած ըլլան Պուտտայականութենէ որուն սերմերը ինկած էին արդէն Միջերկրական եղբրները, Եղիպտոսի, Փօքը Ասիայի ու Պաղէստինի մէջ, Քրիստոնէական թուականներէ առաջ : Աղեքսանդրիայի Պուտտայականները յարաբերութեան մէջ էին օտար հաստատութիւններու հետ, թերեւս Յիսուս ուսու աւ վարդապետութիւնները անոնցմէ, կ'ըսէ Շլէյսն :

Ըստ անոնց համար որոնք կրօնական հակամտութիւններու հողեկան բուն շարժումներ մ'ունին իրենց մէջը՝ չեմ խորհիր որ Պր. Հուպպէ-Շլէյսնի սազաղափարները — որ երբէք հակասական չ'են — բան մ'իսկ պակսեցնեն Աստուածային ուսուցումի արժէքէն որ կը պարունակուի մեր Աւետարաններուն մէջ :

Այս բոլոր խօսքերէն վերջը, իմ շարգելի ընթացողներու հետ պղտի հասկացողութեան մը զալ պէտք էր : Այն օրէն որ զրականութեան հանդէպ անկուշտ սէր մը տածել սկսայ, այդ օրերէն իսկ իմ հիպոցումիս առարկայ ըրած եմ հին զրականութիւններուն մէջէն Յունականն ու Հնդկականը : Եւ այդ սէրս կարծես իմ մէջս առաջին մղումը զբաւ Պուտտան ուսնելու, որուն վրայ շատ քիչ

խօսուած էր՝ Պուտտան ուննիլ՝ . . . զաւտացիի միամիտ փափաք մը պիտի ըսէիք, այնպէս չէ՝ Սակայն Անգղիական լեզուի հմտութիւնս աս մասին զիս աստիճան մը զոնէ յաջողցուց՝ բաներ մը հաւքելու հոսկէ ու հոնկէ, որուն մէկ նմոյշը աւասիկ ասի էր արդէն :

Քրիստոնէութեան ու Պուտտայականութեան միջև լայնիկէ կարողագոյններուն թողած, շատ հարեւանցի ձգեցի այդ կէտը, ինտոր արդէն տեսան ընթերցողները : մանաւանդ որ իմ նպատակն իսկ այդ չէր, սակայն չեմ կրնար չդաւանիլ իմ սուրբ նախահայրերուս այն բարի Աստուածը որուն անունը քնքել ուզեցին Պուտտան և ներկայ իմաստասէրներէն ոմանք, իրենց սրտէն ու մտքէն, յաղթութիւն մը տարած ըլլալու յոխորտանքովը :

ԽՈՍՐՈՎ. ՔԷՇԻՇԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԱՄԱՆՈՒԻ ՆՈՒԷԻՆԵՐ ՊԶՏԻԿ ՏՂՈՅ

Ա .

Պզտիկ մանուկին մումունըը

Երգելով սուրբ անունդ՝
Յիսուս, Փրկիչ իմ,
Կարօ՞ւմ սրաբունդ՝
Ոսկիդ կը կառչիմ :

Քեզ համար իմ մայրիկ՝
Կը խօսի՞ բաներ,
Որոնք միտքս փոքրիկ
Դեռ լաւ չ'ըմբռնեմ :

Վարժապետս այ բարի՝
Կը զովի այնքան,
Որ ա՛լ եք կը փարի՝
Հոգիս մանկական :

Դեռ պզտիկ եմ, քերուս՝
Բայց արտիկս է վառ,
Ընդունե՛ք՝ իղծերուս
Խրկականո՛ճ բուրուտ :

Շատ արժար ու ոսկի՝
Քեզմէ չեմ ուզեր,
Այլ քանց մեր ու կողի
Անուշիկ քու սեր :

Զօրացո՛ւր չարին դիմ,
Զըլլամ անառակ,
Սուսն ու պիղծն այ ասեմ
Զերդ անքիժ տատակ :

Իրիկուն, առատօ՞՛ս
Սէրս ընծայ քամ քեզ,
Վարդի պէս քաղցրահոտ,
Բացուիմ փափուկ, հեղ :

Շունըս՝ խունկ համասփիւ՞ն՝
Ելլայ բող երկին,
Սըբբութեան՝ քու գեղիւն՝
Զերդու իմ հոգին :

Կարօ՞ւմդ քրքրայ՝
Կուրծես ամեն անուն,
Հըսկէ վախճ իմ վրայ՝
Հոգիս մնայ արբուն :

Ճընճընճի՛կ անմեղուկ՝
Միտ խօսիմ ճիւ ճիւ,
Ամեն տեղ գերդ ճննուկ՝
Յանեմ կեանք, հրեյի :

Ասդն ըլլամ ցրճութեան՝
Վառի՛մ երփնունակ,
Սէ՛ր երգեմ յաւիտեան՝
Սէ՛ր երկնազաւեակ :

Հայրիկէն միտ վախճամ՝
Մայրիկից՝ հըլու,
Դաստուի՛ս հոգեխնամ՝
Պրտակն ըլլալու :

Ազօրեմ անձանձի՛ր՝
Ոսկերու՞ղ երբեմ,
Դուրդ հայցեմ երկնանձի՛ր՝
Դո՛ւք՝ երկնապարգեւ :

Կը պաշտեմ սուրբ անունդ՝
Յիսուս, Փրկիչ իմ,
Երգելով սըբաբունդ՝
Քեզի՛ր կը կառչիմ :

Մ. ԹՈՒՐԵԱՆ

Յ Յ Ձ Է՝

Սիրուն մանկիկ, նրնքէ՛ խաղաղ խոր
 ֆունով,
 Քանի որ դեռ նրզնամսեր կեանքին
 Իրենց խամրող սրխազղեցիկ սև
 զոյնով,
 Չեն մրբագներ ֆու ծիծաղկոս դեմք
 անզին:


Թող հեծալից վառ երագներ ֆեզ օրենց,
 Ու հրեծակներ բուերուն մեջ ֆեզ առած՝
 Ասուածային նրւագներով քող պարեն,
 Ու անուօ ֆուց երբէք չըլլայ խրոսված:

Երբ աշխարհեց զգուած ըզեզ կը դիտեմ,
 Համբուրելով ֆու բարմ այսեր կարմիր
 վարդ,
 Կը սփոփուիմ ես—արդեօք ինչո՞ւ,
 չը գիտեմ,
 Սակայն կը զգամ թէ ըրխուր չեմ, այլ
 զըւարք:

Ժրպիհներուդ արձակած ջերմ ցոլերեց,
 Վիսեսրս ամբողջ կ'ոյրնչանան կը հայլին
 Թորով բառերդ իմ սրբոյս ժանգ կը
 ֆերեց,

Եւ իմ աչերը ֆու հուրով կը վայլին:
 Օր մը ֆեզմէ խոյս պիտի օայ հանզիտ
 ցինջ,
 Եւ երագներ մըլձաւանջի ցան ու ցիր
 Պիս՝ ամպոսեց հակասղ ամբիծ, յըս-
 սակ, ջինջ,

Անմեղ մանկիկ, սիրուն մանկիկ բնացիր:
 Երզնկա Ն. Կ. Տ. Ս.



ԼԵՅՈՒՍՏԱՆԿԱՆ

ՀԱՆԻԿԻ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՃ ԳՏՆՈՒՈՂ
 ՀԱՄՇԷՆՑԻՆԵՐՈՒԻ ԳՄԱՌԱԲԱՐՔԱՐՔԱՌՐՈՐ

(Շար. Բիւրակցի քիւ Ձեց)

Մուրկ Հազարի գլուխ՝ որ չհասած մաշ-
 կերը կը պատտէ, կը վիժէ, աւրուած
 եւ սեփ սև կըլած:

Մուօսա կարմիր սունկ (մանքար):

Մուրք Մուրք (Թրք. եմվիխ):
 Մուրիլ Հոգալ, հոգ ընել (Թրք. գայ-
 դու եքմեխ):

Մօթ Մոթին մէջ լաւ պահող (արարք.
 հաթըրգ). — խելացի. «մտօք մաշտ է»:
 Մըմուր Հնձանէ նոր կլած խաղաղի
 բեք, որ կամաց կամաց եռալու վրայ է
 սակաօին մէջ եւ հետզհետէ զինի կ'ըլ-
 լայ:

Մօլա Գաղջ Ղուր (Թրք. ըրզ սու):
 Մօնու Թուխա Գիւղացի կիներ Ձատ-
 կի մեռելոցին, խաչուողը, «երիցկնտո-
 ցը սեղնէն» (= երեցկիներու սեղա-
 դանէն) «խալվուտ հաց առնին կու»
 «ե տուները տանելով՝ հաւերուն առջեւ
 կը թափեն. որպէս զի հաւեր այդ փըշ-
 րանքները ուտելով մօնու նստին եւ պու-
 պուլ (= վառահայ) հաննն»:

Մօմք Հօրեղբոր կին:

Մօնած Մանած (Թրք. իլիլիխ):

Մօն գալ (= ման գալ) լ. պատրի. Թա-
 փառիլ (Թրք. կեզմեխ, օլաբմագ), «էս
 սըզար սարը մօն եկի» = այսչափ ման
 եկայ սարերու վրայ: 2. կարեւորու-
 թիւն տալ, ուշադրութիւն ընել. ումկ.
 ա'յն տեղերը ըլլալ, հոս ըլլալ (Թրք. օ-
 րաւա օլմագ) «մեր տէրն էջ բօնին մօն
 չի գալ» = մեր Տէր հայրը այդ բանին
 կարեւորութիւն չիտար, այն տեղերը չէ՛:

Ման գալ ասացուածին ճշգրիտ գործա-
 ծութիւնը հիանալի է Համչէնցոց բեր-
 նին մէջ:

Մօնի (= մանի) կաղնի, թեղօշ (Թրք.
 մեքե) chène:

Մօնչ Մանչ (Թրք. օլլանց):

Յեք յետոյ, ետքը (Թրք. սօնրա):

Յոյս Փափաք (Թրք. աըլու) «չատ
 յոյս ունէի մօտը եկուչի» = շատ փա-
 փաղ ունէի քովդ գալու:

Յոնեյ (= յորդեյ) քշել, տանիլ, Թա-
 փել:

Նախասել Սպաննել, մեղքնել:

Նեհրել կամ Նեհրել սկօիլ. «Հայ
 սուրբ, ծառայ եմ կարողիդ, էս մաշըը
 զողութեան նեհրած ունի»:

Նեոր, նեոյ (= նոր). նոր (Թրք. բազե,
 եչնի) նեոյ փոնչեոյ արխը. լազտ դեռ

կատարելագլխ չհասունցած, դակլիզգս
վիճակի մէջ, կը ժողովեն՝ փութը կը չոր-
ցընեն (ուսկից՝ փունջոր) եւ յետոյ կ'ա-
ղան. այս է փունջոր ալիւրը, որ շատ
համեղ հաց կ'ունենայ:

Նեոյ արի Նոր տարի:

Ներեւ վարը (Թրք. աւաղը) բարձր
համեմատութեամբ. « Տօ', ներքեւ կամ
ներքեւէն իշթող չիկա՞յ թէ » = ծօ',
վարէն դնացող չկա՞յ:

Նմանակ նման, պէս:

Նորգել Նորոգել (Թրք. եեցիլեմէք, քա-
գեկեմէք):

Նօւր Քիչ:

Շալակ Մարդու կոնակով տանելու
չափ բեռ. (Թրք. եիւք, սրք). « Մէկ
չալակ գարի ունի » (այիւր եիւք, պիւր սրք
արբար վար): Այնթապցիք Եփէի ձեւը
պահեր են եւ այն ալ միայն պոյանընե-
րու (Ներկարար) գործածութեան մէջ.
Եփէի ըսելով կը հասկընան ներկուելիք
նիւթերու (կտաւ, մանած, հանդերձե-
ղէն) բեռ մը, որ կ'ունակով կը տարուի:

Շալիլ Շալալը (=կոնակը) ասնել
(Թրք. սըրթլամաք):

Շան Օղուտ. « Շան ըրաւ եոյ. » =
օղուտ չըրաւ:

Շալլով (Թրք. Եալլով. չողգամ):

Շասիմակ Փայտէ փոքրիկ թատ մը
խուփով. գուտեմ, գուտ, յատկագլխ իւղ
դնելու համար չիեռած: Կ'ըսուի նաև
գուտուրիլի:

Շարմաղ (=ձար-մաղ = սար-մաղ =
չարմաղ) ամենէն մանր եւ խիտ աչքե-
րով մաղ ցորենի ալիւրի համար:

Շերեփ Թրք. չեօնէ:

Շըլսիլ, Եիլի (=իշիսիլ), տիրել, տեւել,
(Թրք. ճիւրֆ երմէք, սիւրմէք). « Խըք-
լուղը ի՞նչ քրար չիսց » = սովը ո՞ր-
չափ տեւեց:

Շիմաօրուտ (=Շնորհաւորուշ) շնոր-
հաւորութիւն, « նէոյ տարին շիմաօ-
րուշի եշթօնք պիտի » = Նոր տարին
շնորհաւորելու պիտի երթանք:

Շիսկուրիւն, (Թրք. սօրլուլուգ):

Շոգ Տաք. « հալօն չող է »:

Շոլ Տաքցած, « երկաթը չող է »:

Շփիլ Միծէլ. « էս մաշըը պէտքը չը-
փեցին եոյ » = Այս մարդը լաւ չծե-
ծեցին: — Չարնել « Սաարը օխտը Եր-
փեց = Ժամացոյցը եօթը զարկաւ »:

Շըշի Պսակեցընել, (Թրք. Եիլլիմէք,
եքվաւք). « Քօմին մաշըը չըջէ կու » =
քօմին մարդը կը պսակեցընէ:

Շփորիլ Բարկանալ, տակն ու վրայ
ըլլալ, Տե՛ս նաև սէյրիլ:

Շօն երես Շաներես. (Թրք. իք եիւրլիւ
իք սուրարլը):

Ոլորիլ Սլքտալ, պտտիլ. « Ի՞նչ ու-
չորտիս »:

Ոյձ (=որձ) արու, « ոյձ էձ մը ու-
նիմ » = արու այժ մ'ունիմ:

Ովեք (= ո՛րք, ով որք) մէկը. « ովեք
չունէի » = մէկը չունէի (Թրք. փիմսիմ
եօլ իթի):

Որեւիլ Չատել, զատուիլ « տնէն ու-
րօշուեցաւ: » տունէն զատուեցաւ:


Ունիմ Օժանդակ բայ, զոր յաճախ կը
գործածեն Համէլչիք, ճիւղ ֆոնաներէն
բային պէս:

Ուռնիլ Բաղմաճիւղ եւ բաղմատերեւ
ձառ մը կաղինի (Յընսըգ) բարձրութեամբ.
ձաղիկները տերեւներու բերին ծոցէն կը
բացուին Մայիսի մէջ, Շաղանկազոյն
խորիս ունեցող ձառ մըն է: Տերեւները
թիղիլի (=գարա աղան) տերեւներուն
պէս, որուն գոյնը մոխրի ճերմակին կը
զարնէ զուրէն, իսկ ներքին կողմերը
մութ կանաչի:

— Այս ճառի ճիւղերն են որ զարգար-
դարին եկեղեցի կը տանին (Ճիթենիի
ճիւղերուն տեղ): Թրք. մուրսար աղանը
կ'ըսեն:

Չարդարդարի օր ուռնիին ճիւղերը
կ'օժտեն կամ պտուօնը կը հանեն եկե-
ղեցւոյն մէջ (=խային նեյսը) եւ այդ
պտուօնէն խաչ մը կը շինեն: Այդ խաչը
խնոցի հարելու ատեն, խնոցիին մէջ կը
ձգեն « կարագը պիտեքիլի կ'ըլլի »:

(Շար.) ԱՍՏՅԷՆ ՎԱՐԳ.



ՏՅՂԱԳՐԱԿԱՆ

Ի Ի Ն Ե Է

Ճանիկի գաւառին մէջ գտնուող զլխաւոր գաւառակներէն մին է Իւնեէ, որ կը տարածուի արեւելքէն մինչեւ Յաթճա, արեւմուտքէն՝ Թէրմէ գաւառակը, հարաւէն՝ Նիկոսը գաւառակը, իսկ հիւսիսէն՝ Սեւ ծով, որ Թէք քիրազ, Յազըզ Պէլէն և Իֆրազ նահանգներով կը կազմէ Իւնեէ գաւառակը :

Իւնեէ գաւառակը կը պարունակէ բազմաթիւ զիւղեր, ուր կը բնակին թուրք, հայ, յոյն, վրացի եւ տեղ տեղ պարսիկներ՝ որոնցմէ թուրքերը կը հաշուին իրը 10,000, հայերը՝ 1000, յոյները՝ 600, վրացիները՝ 200 և կը զբաղին երկրագործութեամբ, անանաբուծութեամբ և պարտիզպանութեամբ :

Վերոյիշեալ զիւղերուն մէջ կան նշանաւոր Հայ գեղեր՝ Իւչփունար, Պալլըզ, Քէլաս, Ֆէնարըս և Քէօթլիկ, որուն վրայ պիտի խօսինք հակիրճ կերպով :

Իւնեէ գաւառակն ընդհանրապէս լեռնային է, միայն ծովեզերեայ մասը հարթ է, սակայն այն լեռնոտ վայրերը՝ որոնք Եգիպտական բուրգերու նման կը բարձրացընեն իրենց յարանաձեւ կատարները ամպերէն վեր, զիտողին պատկերացընելով բնատուր պանազան պատկերներու լեռնային անձանօթ վայրերու մէջ բնութեան տուած օժիւտներ՝ որոնք սուրբ զգացումներ կը ներշնչեն, այնքան ցորտ, ա՛յնքան սառ կ'ըլլայ, որ նոյն իսկ յունիսին իրենց կողերուն վրայ ձիւնի անպզին կոյտեր կը տեսնուին :

Հակառակ կլիմային անյարմարութեան, երկիրը խիտ բարեբեր է, կը մըշակուին եգիպտացորեն, կանեփ, կանեփուռնտ, վուշ, վարսակ, գարի եւ շատ տեսակ պտղատու ծառեր, որոնք արտածելի նիւթեր են, իսկ ծովեզերեայ մասին մէջ կը մշակուի որիզ՝ որու բըրինձը նշանաւոր՝ ամէն տեղ ծանօթ է :

Այդ գաւառակին լեռնոտ վայրերուն

մէջ կը բարձրանան հսկայ ծառեր ինչպէս արմի (գաւռ. բրբո.) չազանակենի՝ նշանաւոր իր անփտութեամբը, մունի (գաւռ. բրբո.) իր ճկունութեան հանգամանգով, հսկայ մայրիներ և կաղնիներ որ ոնցմէ մի քանին կը գործածուին շինութեան :

Լեռնային այդ անձանօթ վայրերու մէջ կը թափառին արջ, գայլ, կզաքիս, աղուէս եւ ուրիշ շատ տեսակ կենդանիներ՝ միքանիներու մորթը յարգի է :

Դժբաղդարար հոն գտնուած հանքերը չեն շահագործուած :

Բուճ քաղաքը. — գալով բուն քաղաքին՝ Սեւ ծովին գեղեցիկ ափերուն վըրայ խիտ գեղեցիկ զիրքով Յասոն Պուրնու կոչուած նրուանդանին զիմաց՝ կը գրկէ վտար ծանծաղ խորշ մը՝ որ Իւնեէի նաւամատոյցն է :

Իւնեէի վաճառականութիւնը եւ առեւտրական հրապարակը վերջերս տենդոտ գործուելութիւն մը ունի նոր բացուած խճուղիին պատճառաւ՝ որ Իւնեէէն մինչեւ Նիկոսը կ'երկնայ :

Իւնեէի այդ գեղեցիկ վայրը՝ որուն ոտքերը կը համարեն Սե Մոլու կատաղի կոհակներ, ունի շատ հնութիւններ, ինչպէս հռոմէական պալատի մը մընացորդները՝ հելլենական ճարտարապետութեան աճիւններով, որ ասպցոյց մ'է Իւնեէի հնութեան, ինչպէս նաեւ հին բերդ մը՝ որ 1/2 մամ հետի է քաղաքէն՝ նշանաւոր իր եկուղներով և ջրամարոններով (Դիտ. խմբ. ուրիշ հնութիւն չկայ) :

Իւնեէի բնակիչներուն թիւը կը հաշուի իրը 8000, որոնցմէ 6000ը թուրք, 1800ը յոյն և 200ը հայ, Իւնեէի հայերուն վրայ պատմական տեսութիւններ կը պակսին, միայն այսպիսի զիտանք թէ հայ տարրը Տրապիզոնէն, Սամսոնէն եւ ուրիշ տեղերէ գաղթողներ են, որոնք առեւտրական գործերով գալով կազմած են հայ գաղութը ։ Ասոնց մէջ նշանաւոր ընտանիքներն են, Էօքսիզեան եւ Մութաֆեան ընտանիքները ։ Հոս գրեթէ ամենքն ալ աղաւաղեալ լե-

զու մը ունին: (Դ . խմբ. նմայ մը զըրկեցէք) :

Կրակացի. — Կրթականը բաւական արթնցած է վերջերս. ունին երկօտ Ս . Մեարտիպեան վարժարան մը ուր կը պաշտօնավարեն եղիլէ Էֆէնտի վարդապետն եւ Արամ Էֆէնտի Հօլասարեան , իսկ ազգկանց Սր . Փառանձեմ երէցեան եւ օգնական մը : Դպրոց կը յաճախեն 60ի չափ աշակերտ եւ 40-50ի չափ աշակերտուհիներ , զժբարդարար , հակառակ ուսուցչական մարմնին տուած խնամոց , աշակերտներուն դաստիարակութիւնը շատ ետ մնացած է : Բայց միւս կողմանէ զրուատելի է հայ երիտասարդութեան ձեւնարիլը , որ զարման մէ բարոյակա՜նութեան յետին կայքը ընկնելու . այն է կրակօտեան վարժարանին բացումը , ուր կը դուստարուին հայ զպրօցականներ եւ բարոյալից ընտիր բանախօսութիւններով օգտակար ու շինիչ ժամանց մը կ'ուսենան :

Կրօնական. — Կրօնականին մէջ յետին աստիճան թող է աստեղի ժողովուրդը , Ս . Մինաս անուամբ եկեղեցի մը ունին , բայց կանոնաւոր երասօչաութիւն եւ բանիբուն տէրտէր կը պսկսին : Իւնեկէի հայ գիւղերուն մէջէն արժանի է միշտ Քէօքիլիկի գիւղը , ուր կը գտնուի 150ի չափ հայ ժողովուրդ , ամենքն ալ երկրագործ եւ շատ աշխատասէր . իրենց մէջ պահած են նահապետական բոլոր ասանդութիւնները : (Գրի առք աւանդութիւնները . — Ծ . Խ .)

Քէօքիլիկի բնակչութիւնը շատ եկեղեցասէր են . իրենց շահերէն աւելի կը պաշտպանեն եկեղեցիին շահերը : Ունին Ս . Կարապետ եկեղեցի մը՝ ճօխ ու սպայժառ օրուն վըրայ կը դուրդուրայ ժողովուրդը : Ունին երկու քահանայ , Տէր Միքայիլ՝ լուսամբու եւ լուս քարոզիչ , Տէր Արիստակէս երամկչտ : Գալով զպրօցին , ունին զըզպրոց մը Ս . Թարգմանչաց անունով , հոն կը յաճախեն 50 ի չափ աշակերտներ , որք կը դաստիարակուին Ղազարոս Էֆ . Թովմատեանէ (չրջանաւարտ Արասատիոյ օրբանոցէն) եւ օգնականէ մը :
Լ . Գ . Թ .

ԿՐԾՆԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հետեւեալ երկու հարցումները մեզի ուզդուած են , Վիւրակնի միջոցաւ ձեռնհասներու պատասխանը կարդալու խնդրանքով .

1. Կարելի՞ է որ եկեղեցիներու մէջ խօսուած քարոզները ձայնագրուին : Կրօնական տեսակետով , որ եւ է արգելք կա՞յ քարոզ մը ձայնագրելու կամ սղագրելու , որպէս զի հետակայ անձերու ալ նոյն քարոզը լսելու կամ ճշգրտեմամբ կարդալու միջոց ընծայուի :

2. Կարելի՞ է պատկի արարողութիւնը , բոլոր ընթերցուածները աշխարհաբար կատարել , անոնց իմաստը հասկննելով ժողովրդին :

Այս երկու հարցումներուն պատասխանները եթէ մեզի հաղորդուին , պիտի հրատարակենք «Րիւրակնի մէջ» , եւ ձեռնհասներէն կը խնդրենք որ ազատօրէն յայտեն իրենց կարծիքը թեր ու դէմ . կրնան ծածկանալով ստորագրել , եթէ պէտք տեսնեն : Երկու կէտերն ալ չահեկանութիւն ունին ժողովրդին համար , եւ եկեղեցիի մէջ նուազարանով ժամերդութիւն կատարելու խնդիրին չափ կը հետաքրքրեն մտաւոր թէ հետաւոր ժամասէրները :

ԱՅԳԱՅԻՆ

Երգնկայն մեզի կը գրեն . — « Միացեալ երեք թագերու մատակարարութեան զորք այնքան զօ՞սացուցիչ վիճակ մը չունի . այս անյաջողութեան նպաստեց Տ . Ստեփանեանի զանցառու չէզոքութիւնը : Եթէ բարեկամներու թախանձանքներն ազդէին իր վրայ եւ ուզէր իր աշակցութիւնն ընծայել , այս աննպատարդիւնքը չէր առաջ գար , եւ Առաջնորդարանը Կառապական վարչ . պատինն ու ազդեցութիւնը կը պահէր : »

(Ծ . Խ . — Եթէ մէկ կողմէ ուրախալի է որ միակ անհատ մը կրնայ եզեր այնչափ ազդեցիկ ըլլալ որ վարչութեան մը

յաջողութիւնն անոր աջակցութենէն կախում ունենայ, միւս կողմէ դարմա- նայի է՝ այսպիսի անձի մը անտարրեր վարուիլը կարելի՞ րան է քէն ընել եւ թեմական-կրթական գործի մը զլանալ իր ծառայութիւնը. . . . Տէր Ստեփանեան էֆէնտի չ'արդարանար՝ ի՛նչ նկատում- ներ ու պատրուակներ ալ ունենայ :

Միւս կողմէ անձակնայի է թէ ի՛նչ- պէս ժողով կամ ժողովականներ կա- խում կ'ունենան միակ անձէ մը՝ ըլլայ նոյն իսկ Տէր Ստեփանեան էֆէնտին, որ, զիտենք թէ, փափաքող չէ իր ազ- ցեցութիւնը այնչափ ծանր կշռել տալ Առաջնորդարանի ժողովներուն գործու- նէութիւնը ջլատելու չափ, եւ եթէ այդ արդիւնքը կրնայ իր շանքերուն չնորհի- նայատուոր ուղղութիւն աննել՝ ու ինք ալ զայդ կը զգայ, աւելի եւս մե- ղազդելի է իր մեկուսացումը թաղային մատակարարական գործէն որ այնքան օգտակար ըլլալ կը խոստանար Երզնկայի զպրօցներուն ու եկեղեցիներուն համար :

Կիլիկիոյ Կարուղիկոսին ընտրութեան վերաբերեալ թէզքէրէն Դատական նա- խարարութեան կողմէ Ս. Պատրիարքին հաղորդում ըլլալով՝ ըստ կայս. բա- րեհաճ Իրատեի, ընտրական գործողու- թիւնները պիտի կատարուին կայս. կա- սաւարութեան որոշման համեմատ, եւ ի մտոյ Ատանա կը մեկնի Պէհա պէյ, կասաւարական պատուիրակը :

Երէկ կտան ժողովը դումարուեցաւ Դաւթիոյ մէջ, յատկապէս կաթուղի- կոսի ընտրութեան վերաբերեալ ինչդի- ներու համար :

Կ'ըսուի թէ ընտրութիւնները պիտի կատարուին Տեանընդառաջի տօնէն առաջ :

— Ուրախ ենք իմանալով որ Տ. քթ. Թորոզեան էֆ. վերստանձնած է Ու- սուսնական կործարի Ատենապետի պաշ- տօնը :

— Կ'ըսուի թէ Գարակէօզեան կտակի գործադրութեան պիտի ձեռնարկուի վե՛րջնապէս, եւ Յանձնաժողովը մտադիր է Բերայի մէջ կամ ուրիշ տեղ մը հիմ-

նել Որբանոցը :

— Թուրք լրագրիչները կը ծանուցանեն թէ Հայերէ Ծաղիկ լրագիրը անպայման կերպով դադարման դատապարտուած է :

Շնորհակալութեամբ ստացանք, Բրո- ֆէտր Ա. Մէյեէի շնորհիւ, Բարիզի Լեզուագիտական Ընկ.եան (Société de Linguistique) Յիշատակարաններէն քաղ- ուածաքար արտաստուած տետրակ մը «A propos de la Loi de Verner et des effets du ton indo-européen), գործ՝ M. Robert Gauthiot : Էջ 3ի ծանօթու- թեան մէջ զիտնականօրէն բացատրուած է Հաճընի գաւառաբարբառին Բ և Ծ տառերուն լծորդութիւնը Սանկրիդ Hr կամ S տառերուն հետ : =

Լոյս տեսաւ Բագմավէպի Փետրուար ամսաթիւրը՝ չա՛նկան պարունակու- թեամբ : Ծարականց խաղերու լըւայ բանասիրական յօդուածը արժանի է ըն- թեցման ամէն ձայնաղրութեան սիրա- հարներու և եկեղեցական թէ աշխարհ- հական բանասէրի : Հ. Ս. Սարեան կը շարունակէ և կ'աւարտէ ԵԿ. Պօքքէլման և Գիրք Վաստակօցի Հայ. Թարգմա- նութիւնն յօդուածը : Հ. Ս. Սերմեանի Հանք և Իրենց Ստուգարանութիւնն զիտական բառարանը կը հասնի առ թի-ւին մէջ ծարիր բառին : Հ. Սուքիաս Էփրիկեան կը նկարագրէ բնալսարնիկ զիւղ մը ուր կառուցուած է Ս. Մարի- անէ Տաճարը :

Այս թիւով Հ. Ս. Սարեան կը սկսի ուսումնասիրութիւն մը «Ս. Գրիգոր Լուսաւորէն տոջ՝ Հայոց քրիստոնէ- ական հաւատոյ յիմնակն վրայ» և կը խոստանայ քննել «Թէ արդեօք յետ Ս. Ս. Թաղէի և Բարթողիմէայ առաքելա- կան քարոզութեանց, Հայերուն մէջ տեւեց անտարանական լուսոյ շարա- իղը մինչև ի Ս. Լուսաւորիչ մեր եկե-ղեցական անբնօրնա ճուրղպետութեամբ : Այս նիւթը ըստ ինքեան շատ կարեւոր է և կ'ենթադրենք թէ Եղիշէ Եպիսկ.

Գուրեան պիտի ուզէ ի հարկին այս նա-
խարհական ճիւղին առթիւ հրատարակ
ելլել. . . ի նարկին : Բայց կը ցաւինք որ
Հ. Ս. Սուրեան այժմէն կը հրատարի
այս շահեկան նիւթին վերաբերող ա-
ռաջին կէտին « Հայ եկեղեցւոյ բացար-
ձակ անկախութեան » վրայ ալ խօսե-
լու : Այս զգուշաւորութիւնը արդեօք
աւելցմովէպի ուսումնական էջերը իը-
նայիչէն դատ եկատումնե՞ր ալ ունի :

Արդի գրականութիւն խորագրին տակ
Հ. Արսէն Ղազրիկեան կը ձեռնարկէ օրի-
նակներով ցոյց տալ թէ Հ. Ա. Կ. Բազ-
նատունի ի իրականին թարգմանութիւնը
« քան զընտանիքն անպամ կը դերագանցէ
իր ճարտար պէսպիսութեամբ », կը շա-
րունակէ Գեղեցկագիտութեան վրայ իր
յօդուածը եւ Մխիթարի կենսագրութիւնը
տաղաչափուած :

Գրախօսական ակնարկներ, Հանդէս
Հանդիսից, Մագնիսական քուն և Տան-
թէի վեցերորդ երգը տաղաչափուած՝
կը գրուեն Բազմավպոյի այս պրակին
մնացեալ էջերը :

Այս պրակին մէջ կը՛դանենք (էջ 86),
զեղեցիկ դիպումով մը, պատշաճ պա-
տասխանը գոր մենք չուզեցինք տալ Պ.
Յովհ. Գաղանձեանի մէկ գրութեան որ
կը խօսի Գաւառ. Գրականութեան արդի
վիճակին վրայ, Նո՞ր բարի լոյս, Պ.
Գաղանձեան, այսպէ՞ս վրէժ կը լուծէք :

Անս. Հանդիսի Յունվար ամսաթիւը
կը պարունակէ 1. Գամիրք, 2. Աղարի-
զոս եւ իւր յորտրականք առ Յուստի-
նիանոս, 3. Ժողովածոյք առակաց Վար-
դանայ, 4 Աշխարհազարկան, 5. Ազդա-
ղութիւն Տէմիրճիպաշեանց (պատկ), 6.
Արեւագրութիւն (Héliographie), 7. Նոր
նորատարկութիւնք, 8. Աղդ. թերթերէ
ծաղկեփունջ, 9. Գաղ. տեսութիւն :

— Պարսկական կառավարութիւնը չոր-
րորդ կարգի Եիբ ու Խուրճիս պատուա-
նշանը չնորձած է Ղալթիոյ մաքսա-
տան գրաքննիչ Գրիգոր էֆ. Ոսկեանին :

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ապահովագրութիւնը ժողովրդին հա-
մար օգտակար միջոց մ'է իր ունեցածը
վտանգներու եւ արկածներու դէմ պաշտ-
պանելու :

Արդ՛ ի՞նչ կայ մարդու համար աւե-
լի թանկագին քան իր անձը, զոր կըբ-
նայ երաշխաւորութեան տակ առնել՝
որքան իր՛ Նոյնքան ալ ընտանիքին, ժա-
ռանգորդներուն օգտին համար, Բայց
ինչ որ նորութիւն մ'է և ժողովուրդը
շահագրգռելու տեսակէտէն՝ այդ ալ Ալ-
լիաննա ընկերութեան ցոյց տուած ե-
րաշխաւորութիւնն է հեծանիւի, ձիւ,
կառքի, թրամվէյի, երկաթուղիի, չո-
քենաւի, ստազատանաւի և նոյն խնկ
միջատներու խալթուածքին դէմ. . .
Անհաւատարի պիտի թուի, բայց այս
այսպէս է, և մենք արիթ պիտի ունե-
նանք խօսելու այս նիւթին վրայ որով
կը զբաղի նոյն ընկերութեան ընդհ.
Գործակատար Գ. Ֆէրասի, Հաճօրու-
լօ խան :

ԿԱՐԵՒՈՐ ՁԵԿՈՅՑ

Արիկեան Աղն. Միհրան էֆ. կը
խնդրէ մեզմէ ծանուցանել թէ իւր
հրատարակած դասագրքերէն սյլ
եւս չի յանձներ Պալենց զբատան,
որով դաւառներէ յանձնարարու-
թիւնք, իւր գրեանց մասին, պէտք
են ուղղուիլ ուրիշ զբալաճառնե-
րու :

Այս անօրինութեան պատճառ-
ները առաջիկային պիտի տարզուին :
1—10

ՆԱԴԱԿԱՍՏՈՒՓ

Շատեր մեզի կը հարցնեն թէ Բիւ-
րակնի կամ ուրիշ թերթերու մէջ ծած-
կանուն ստորագրութիւնով յօդուածնե-
րու աւերբը որո՞նք են :

Պատասխան. — Անոնք որ ծածկանուն
կը ստորագրեն, ըսել է, չեն ուզեր (հա-
մեստութեամբ կամ ուրիշ նկատումով)

իրենց անունը յայտնել. հետևարար անխորդրագոյանութիւն կըլըար այդ անունները երևան ընդել, մանաւանդ որ շատերը մեզի ալ անծանօթ են

Իզվիտ, Յ. Ե. — Վճարեցէք մեր գործակալին :

Հիւսէյնիկ, Կ. Յ. — Չէ թէ մեր Գործակալին այլ նոյն իսկ մեզի հետ ալ կրնաք վէճ, անհամաձայնութիւն ունենալ որ եւ է կէտի վրայ, բայց ատով իրաւունք կ'ունենաք բաժանորդագին չվճարելու : Ինչ արամաքանութիւն : Ղրկեցէք ձեր պարտքը, 96½ ՂՐԸ. պակաս թիւերը յանձնեցինք : Ղրկեցէք նաեւ նիւթերը :

Իզվիտ, Գործակալ. — Կը կարգադրուի բոտ ձեր գրութեան :

Ամասիա, Ա. Ճ. — Երկու բաժանորդացները ինչ վճարուելու համար պէտք է որ այդ տեղէն զրել տաք : Դրամը զրկեցէք փոսթով :

Բաղե, Խ. Վ. — Պայտլ Հաուզին յանձնեցինք կրկին անգամ վճարուած տարեգինը :

Տիարպէիք, Լ. Ս. — Ստացանք : Գարաբ, Պ. Բ. — Ղրկեցէք :

Թարա Կ. Ք. — Ղրկեցինք թիւ 41ի Հանելուկին Մրցանակը, ձեր ուղած 4 զրքերը :

Աղիւսանդրիա, Յ. Պ. — Գանձեցինք ձեր զրկածը :

Մարա, Թ. Շ. — Հետագրով ուղած նիդ զրկուեցաւ :

Այնթապ, Գ. Թ. — Ձեր նամակին պատասխանը կը ստանաք Տիար Գ. Պ. Էն, որուն զրկած ենք ձեր խոստումները չհշտող գրութեանց պատճէնը :

Մամսն, Կ. Ս. — Մեր գործակալն է Մ. Է. Ք. Դաւթեան :

Ազերդ, Պ. Շ. — Այսօր դանձեցինք 60 ՂՐԸ. ր :

ՔիտիւրԱԿՆ 1898 չըջանի 1-52 թիւերը կը կազմեն զեղեցիկ հատոր մը որ կը վաճառուի 2 լիւրայի :

Նոյնպէս եւ 1899ի չըջանը : Դիմել Ս. Դաւթեանին, թիւ 17 Գաղասէք խան, Պահճէգափու :



Մինչեւ այսօր կարելի չ'էր չեղաւ ապացուցանել թէ Եսվրուեան — Իսագուլեան համարաւոր վաճառատան թէյերուն չափ համեղ ու կազդուրիչ թէյ կրնայ գտնուիլ : Այս յաջողութիւնը ձեռք բերելու համար, յիշեալ վաճառատունը գտած է թէյի տեսակները բազադրելու այնպիսի միջոց մը որ կը գոհացընէ ամէն ճաշակներ ու քսակներ : Հասցէ՝ Պահճէ-Գափու, Ճէլալ-պէյ խանի դրան կից, Եսվրուեան — Իսագուլեան մեծ վաճառատուն թէյի :

Բացում է ռաժանորդագրութիւն

Բ Ի Ի Ր Ա Կ Ն Ի

1900

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Տարեգին	50 դրու
Վեցամսեայ	30 »
Արսասանման	15 ճրանք
Ռուսասան	6 ռուպլ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգագրական	
Ս. Սարգիս	Յ. Մ.
Բանասիրական	
Պ. Կ. Կոնյան	[վերջ]
Գրական	
Պշտիկ մանկէն մըմնջը	Մ. Թ.
Ն՝ ըէ	Ն. Կ. Տ Ս.
Լեզուաբանական	
Համընկող գաւառաբարբառը	Բարգ. Վ.
Տեղագրական	
Ի. Նիէ	Լ. Գ. Թ.
Կրօնական	
Երկու հարցում	
Նամակատ. փ. Լ. Կ. Եր. Ազդը	

Արտօմատը. — Հ. Ս. Խ. Ի Թ Ի Ի Ն Ա Ն

ՏԳԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԱՆ